2. ՍԱՆԱՀՆԻ ԿԱՄՈՒՐՋ. ձախակողմյան՝ հյուսիսային թևի վրա, ներսի կողմից, 7 տող.



ԹԼՎԻՆ ՀԼԱՅՈՑ ՌՅԼԷ (1888) ԿԱՄՐՋԻՍ ՁԱ-
ԽԱԿՈՂՄԵ ԼԱՆ ԽԱԽՏԵԼ ՀԻ-
ՄՔՆ ԵՒ ՈՐՄՈՒՆՔՆ ՎԵՐՍ-
ՏԻՆ ՆՈՐՈԳԵՑԱՆ ԻՍԿԱ-
ԿԱՆ ԱՐԴԵՍԲՄԲ ՍԼԱԽԼԱՀՆԵՑԻ
ԹԱԴԷՈՍ ՔԼԱՀԼԱԽԼԱՅԻ ԵՐՈՒԱՆ-
ԴԵՆՑ Ի ՅԼԻՇԼԱՏԼԱԿ ԻՒՐ ՃՆԼՈՂԼԱՑ:

Ծանոթ. Հյուսիսային՝ սրընթաց ցած իջնող խելը լցվել է հողով՝ տրանսպորտային շարժման նպատակով: Սանահին տանող նոր ճանապարհի գործարկումից հետո կամուրջը բերվել է իր նախկին տեսքին, որի ընթացքում էլ՝ 1977 թ. բացվել է այս՝ վերստին նորոգելու մասին արձանագրությունը:

Հայտնի է դառնում, որ կամուրջը նորոգվել է նաև անցյալում, 1888 թ. առաջ, բայց ե՞րբ, ի՞նչ պարագաներում՝ մնում է անհայտ, քանի որ այդ մասին գրավոր հիշատակություններ չեն հասել մեզ:

3. ԽԱՉՔԱՐ. Կարի ֆաբրիկայի պահեստի մեջ, խաչաթագի կողքերին 1 տող (XIII դ.).



ՄԲ ԱԼՄԵՆԱՅՓՐԿԻՉ:

Ծանոթ. Խաչքարը զուրկ է պաճուճանքից, կողերի զույգ կիսասյուները կամարաղեղով, հիշեցնում է Հաղբատի դպրոցը: Ակնախաչում «դրոշմված» է խաչ՝ իբրև վկայություն խաչելության, որի գաղափարի համալրումն է և թագավորությունը՝ խաչքարին վերապահելով Ամենափրկիչի գործառությունը՝ առանց խաչելության պատկերագրության:

ՍԱՆԱՀԻՆ

Նշանակալից բնակավայր է եղել դեռևս չորս հազար տարի առաջ: Տեղի դամբարաններից 1871 թ. Ա. Երիցյանի հայտնաբերած խիստ հազվադեպ ու յուրահատուկ խե-

ցե և բրոնզե իրերն ու առարկաները[15] սերտ աղերսներ ունեն Հայկական լեռնաշխարհի նույն ժամանակաշրջանի բարձր զարգացման հասած մշակութային ժառանգության հետ: Գունագարդ ու բանդակապատ գտածոները վկայում են առաջադեմ կենտրոն լինելու փաստը, որը, բնականաբար, պետք է ունենար նաև ծիսարան: Քրիստոնեությունն ընդունելուն պես նոր դավանանքի պահանջներին համահունչ աղոթարանի կառուցումը պարտադիր պահանջ էր, և Գրիգոր Լուսավորչի կողմից ատրուշանի թե մեհյանի ավանդապրույցը ամենևին սոսկ երևակայության ծնունդ չպետք է համարել: Ինքնին հետևում է, որ հին սանասինեցին խաչապաշտություն ընդունելուց 650 տարի հետո չէ, որ նոր աղոթատուն՝ եկեղեցի պետք է կառուցեր:

Դա, անշուշտ, կատարվել է IV դ. սկզբում, բագինի վրա բարձրացված խաչի տեղում, որը հիմնավոր վերակառուցվել է X դ. առաջին կեսին՝ Աստվածածնի անվամբ, և որի որմածքում այժմ էլ մնում են հին սրբարանի հետքերը:

Խնդրի անվերապահ հիմնավորումը դեռևս խորագնին հետազոտման կարիք ունի, սակայն կանխամտածված չպետք է շրջանցել հնագույն աղոթարանի մասին ավանդապատումը, Գանձակեցու, Ղրիմեցու, Քաջբերունու, Ե. Լալայանի, Հ. Խալփախչյանի ակնարկներն ու կռահումները: Ըստ էության, համանման եզրակացության է հանգել նաև պրոֆեսոր Կարո Ղաֆադարյանը՝ վանքի համակողմանի ուսումնասիրության և վիմագիր արձանագրություններին նվիրված իր աշխատության մեջ[16]:

Սանահնի վանքի հիմնադրության մասին վիմագրական ու մատենագրական հաղորդումները կցկտուր և երկիմաստ են: Պատմիչները վանքի ու եկեղեցու հիմնարկեքը խառնել-նույնացրել են՝ ստեղծելով անորոշ վիճակ: Ժամանակամերձ Սամուել Անեցու և Ասողիկի հաղորդումները կամ անորոշ են և կամ երկմտելի այն աստիճան, որ չի հստակվում՝ նախապես Սանահինն է կառուցվել, թե՞ Հաղբատը: Իսկ Կիրակոս Գանձակեցին հաղորդում է, որ Ռոմանոս կայսրը (920-944 թթ.) «հալածեաց զամենայն կրօնաւորս և զքահանայս հայոց, որք էին յաշխարհին Հոռոմոց, զի ոչ հաւանեցան դաւանութեանն Քաղկեդոնի: Եւ եկեալ յաշխարհս Հայոց յաւուրս Աբասայ... շինեցին և եկեղեցի մի յանուն ամենասուրբ Աստուածածնին ի վանքն, որ կոչի Սանահին, ի սահմանս Լոռէ քաղաքին... »:[17]

Պատմիչի խոսքերից հետևում է, որ հալածական հայ հոգևորականները ոչ թե հիմնարկել են վանքը (ինչպես կարծում են հաճախ), այլ արդեն իսկ գոյություն ունեցող վանքում կառուցել են Ս. Աստվածածին եկեղեցին: Հետևապես, վանքը եղել է դեռևս մինչև X դարը, որը, բնականաբար, ունեցել է կրոնավորների խումբ, գրչատուն, նյութական միջոցներ: Սակայն նրա համբավն ու հեղինակությունը շեշտակիորեն բարձրա-

---

[15] Գուցե այս հեռավոր ժամանակների արձագանքն է *Սանահին* անվանումը, և այն ոչ թե ժողովրդի մեջ տարածված Հաղբատից հին լինելու միտքն է արտահայտում (սա հին է, քան նա, սա-նա-հին), այլ պղնձեդարյան ժամանակաշրջանից (մ.թ.ա. III-II հազ.) եկող բնիկ հայ բառերի՝ սան – պղնձե կաթսա և հին, վաղեմի, մաշված, հնացած (*Հր. Աճառյան*, Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Եր., 1979, էջ 170. *Ստ. Մալխասյանց*, Հայերէն բացատրական բառարան, հ. IV, Եր., 1945, էջ 180); բառերի համակցումն է՝ մոռացված հետագա դարերում: Չէ՞ որ Սանահինը (ինչպես և Հաղբատը) գյուղանուն է, որից ածանցվել է վանքի անունը՝ Սանահնի վանք (ինչպես Օձունի վանք), և վանքի անունը չէ, որ տրվել է գյուղին:

[16] *Կարո Ղաֆադարյան*, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Եր., 1957, էջ 10:

[17] *Կիրակոս Գանձակեցի*, էջ 84-85:

ցավ, երբ կառուցվեց նաև Ամենափրկիչ եկեղեցին, և Սմբատ Տիեզերակալի հրովարտակով 979 թ. վանքը դարձավ եպիսկոպոսանիստ, Կյուրիկյան թագավորության հոգևոր կենտրոն՝ լայն իրավունքներով ու ընդարձակ վիճակով: «Ճառընտիրի» 1006 թ. հիշատակարանը տեղեկացնում է, որ կորած համարվող այդ ժողովածուն գտնվել է «...յերկրէն Խոր Հայոց, ի գաւառէն որ կոչի Ձորոյ գետ, ի համբաւեալ ուխտին Սանահին անուանեալ»,[18] որը վկայում է հազար տարի առաջ վանքի համբավի ու հռչակի մասին:

Ճարտարապետական տարառոճ շինություններով վանքը համալրվեց և ավարտուն կերպարի հասավ XIII դ. սկզբին: Նրա շուրջը համախմբվեցին Ձաքարյաններն ու Մամիկոնյանները, Աշոտյանները, մեծահամբավ վարդապետներ, գիտնականներ, դավանաբաններ, քերականներ, երաժիշտներ, գրիչներ, ծաղկողներ: Այդ երանելիների մեջ էին Հովհաննես Գիտնական Սանահնեցին, Դիոսկորոս քահանայապետը, «այր մտաւոր եւ հանճարեղ», «անյաղթ փիլիսոփա, հմուտ մեկնիչ ու հռետոր Անանիա Սանահնեցին (X-XI դդ.), երանելի Գրիգոր վարդապետ Տուտեորդին (XII դ.), Գրիգոր Աբասորդին, Հովհաննես Խաչենցին (XIII դ.), Սարգիս արքեպ. Արղությանցը (XVI դ.) և շատ ուրիշներ: Ասողիկի վկայությամբ՝ դեռևս Աշոտ Ողորմածի օրոք միաբանների թիվը հասնում էր 500-ի: Անշուշտ, այդ քանակն ավելի մեծ կլիներ XI-XIII դդ.:

Վանքը նորոգվել է քանիցս՝ XI դարից սկսյալ, վերջին անգամ՝ Հայաստանի կառավարության Հուշարձանների պահպանության վարչության կողմից XX դ. երկրորդ կեսին:

Սանահնի վանքը գտնվում է Թումանյանի շրջկենտրոն Ալավերդի քաղաքից հարավ (այժմ՝ նրա կազմում), Դեբեդ գետի աջակողմյան բարձրադիր սարահարթի վրա, Ձաթին սարի հյուսիսահայաց լանջի հարթեցված փոքրիկ տափարակում:

Համալիրի կազմում են շրջապարսպի մեջ ներփակված 3 եկեղեցի, 2 գավիթ, գրատուն, ճեմարան, 2 դամբարան, զանգակատուն, դրսում՝ 3 եկեղեցի և 2 դամբարան: Հատուկ կարևորություն ունեն աղբյուրների շենքերն ու գեղաքանդակ խաչքարերը:

Ս. Աստվածածին եկեղեցի. Համալիրի հնագույն շինությունն է՝ հետագա երկուսուկես դարերի ընթացքում վեր խոյացած կառույցներով շրջափակ: Դիտելի է, սակայն, որ շինարարական ձեռնարկումների ծավալման ընթացքում մշտապես հոգ է տարվել հատակագծային այնպիսի լուծումներին, որ համակառույց տանող հիմնական՝ հյուսիս-արևմտյան եզրուղուց ապահովվի եկեղեցու (և մնացած միավորների) տեսանելիությունն ու ընկալումը: Միանգամայն իրավացի է ճարտարապետության դոկտոր Գ. Շախկյանի նկատառումն այն մասին, որ ընդհանուր հատակագծում փայլուն կերպով են լուծվել «առանձին հուշարձանների հորինվածքում դրսևորվող համաչափական և համամասնական որոշակի կապը, փոխպայմանավորվածությունը, դիտողական ընկալման լավագույն պայմանները»:[19]

Պատմական վստահելի տեղեկությունների համաձայն, Ամենափրկիչ եկեղեցին կառուցվել է Բագրատունի Աբաս Ա թագավորի ժամանակ (928-953 թթ.), հակաքաղկեդոնական դավանության պատճառով կայսրությունում հալածված և Հայաստան փախած միաբնակ հայերի կողմից, ըստ Կ. Ղաֆադարյանի, հավանաբար 930-ական թվականներին:[20]

---

[18] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ *Ա.Ա. Մաթևոսյանի*, Եր., 1988, էջ 81 (տողատակ):

[19] ***Գառնիկ Շախկյան***, Լոռի, Եր., 1986, էջ 87:

[20] Սանահնի և Հաղբատի հուշարձանների պատմաճարտարապետական հակիրճ տեղեկությունները հիմնականում ծաղկաքաղված են պրոֆեսոր Կարո Ղաֆադարյանի հանրահայտ մենագրություններից:

Վանահայր Սարգիս արքեպ. Արդուրյանցը մեծ երկրաչարժի ավերումները վերացրել է 1632 թ.: Ուստա Սարգիսը նորոգելով տաճարը, նրա նախնական՝ նիստավոր թմբուկը վերանորոգում է գլանաձևի: Ներսում պահպանվել է շրջանաձևությունը՝ ի սկզբանե պատված որմնանկարներով, որոնց հետքերն են նշմարվում: Հետագա վերանորոգումների ընթացքում հորինվածքային փոփոխությունների չի ենթարկվել, և որմածքում պահպանվել են հնագույն աղոթարանի մնացորդները:

Սանահնի վանքի Ս. Աստվածածին եկեղեցին արտաքինից քառանկյան մեջ ներփակված, առանց սյուների գմբեթակիր սրահ է՝ անկյունային ավանդատների շնորհիվ ներքուստ խաչաձև պատկերով, մի սկզբունք, որը բնորոշ է հայկական եկեղեցաշինությանը:

Ամենափրկիչ եկեղեցի. Կրում է նաև Գլխավոր ու Կաթողիկե անունները: Տեղակայված է համալիրի հարավարևելյան կողմում, ոմանց կարծիքով՝ նույնպես հնագույն շենքի տեղում: Հատակագծային ու վերծիգ ծավալներով գերիշխում է համալիրում:

Պատմագիրներ Սամուել Անեցու, Մատթեոս Ուռհայեցու, Վարդան Վարդապետի հաղորդումների և մատենագրական հավաստի այլ աղբյուրների, մասնավորաբար Սանահնի «Քոթուկում» մեզ հասած Սմբատ թագավորի 979 թ. հրովարտակի համադրությամբ, Կ. Ղաֆադարյանը հիմնավորել է, որ Ամենափրկիչ եկեղեցին կառուցվել է Աշոտ Ողորմածի (953-977 թթ.) հովանավորությամբ, իր կնոջ՝ տիկնաց-տիկին Խոսրովանույշ թագուհու միջոցներով ու վերակացությամբ, իրենց որդիներ Գուրգենի (Կյուրիկե) և Սմբատի արևշատության ակնկալիքով, 966 թ. (Սամուել Անեցու մոտ՝ 967 թ.):

Խնդրի լուսաբանման առումով առավել վստահ ու աներկմտելի է նույն «Քոթուկում» պահպանվող Բարսեղ Կեսարացու «Յաղագս ճգնաւորաց» ձեռագրի հիշատակարանի տեղեկությունը: Դեպքերին քաջագիտակ ժամանակակից գրիչը հայտնում է.

«Ես անարժանս ի կրաւնաւորաց փցուն գրիչս Սիմեաւն, ի թուականութեանս Հայոց ՆԻԱ (972), ի նորաշէն վանքս, կոչեցեալ Սանահին, հրամանաւ հաւր իմոյ Յովհաննիսի, որ էր վանիցս շինութիւնն ամք Զ (6), զոր շինեաց բարեպաշտ թագուհին Խոսրովանոյշ, ամուսինն Աշոտոյ Հայոց շահնշահի»[21] և ապա պատգամում է մաքրամատույց աղոթքներում հիշել Աշոտ Շահնշահին, սուրբ ուխտը շինող, բարեպաշտ ու աստվածասեր թագուհուն, գործին մասնակից իրենց որդիներ Սմբատին, Գագիկին և Գուրգենին: Այնպես որ կասկած չի կարող լինել որ վանքի (բնականաբար՝ եկեղեցու) կառուցման փառքը կրում է Խոսրովանույշը, և այն տեղի է ունեցել 972 թ. Զ (6) տարի առաջ՝ 966 թվին:

Թագուհու և որդիների կառուցած եկեղեցին էլ կարող է լինել միմիայն այն շենքը, որի արևելյան ճակատին գետեղված են տաճարի մանրակերտը ձեռքներին հասակով մեկ կանգնած կտիտորների քանդակները՝ *Կիւրիկէ Թագաւոր, Սմբատ թագաւոր* մակագրությամբ: Սակայն տարակուսանք է հարուցում (և որոշ դեպքերում թյուրիմացության տեղիք է տալիս) այն իրողությունը, որ 966 թ. ոչ Սմբատը և ոչ էլ Կյուրիկեն դեռևս թագավորներ չէին, և փաստի արձանագրումը դառնում է կասկածելի: Բայց ակնառու է, որ բարձրաքանդակները կրող քառանկյունի, շարվածքին անհամապատասխանող սալը պատի մեջ է դրվել ոչ թե շինարարության ընթացքում, այլ ավելի ուշ, երեսակալների շարքերի մեջ կցոններով հարմարեցնելով, և Ղաֆադարյանի կռահմամբ՝ 980-ական թվականներին, երբ նրանք արդեն հանրաճանաչ թագավորներ էին:

---

[21] Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի Քէօքուկը). Աշխատասիրութեամբ՝ *Պարոյր Մուրադեանի*. Ս. Էջմիածին, 2007, էջ 55:

Ս. Աստվածածին եկեղեցու նման այս տաճարը ևս դրսից ներկալված է արևելք-արևմուտք ձգված քառանկյունի ծավալի մեջ: Ներքին հորինվածքում նույնպես սրահը չի ջլատվում սյուներով և եռամաս հատվածավորման կենտրոնական քառանկյան վրա, խորանի եզրակողերը և ետին որմնասյուները կապող կամարների ու անկյունային առագաստների հուսալի կոնստրուկցիայի վրա բարձրանում է գլանաձև թմբուկը՝ վերասլաց կոնաձև վեղարով: Այս դեպքում ևս անկյունային ավանդատների միջոցով ներքուստ կազմակերպվել է խաչապատկեր հատակագիծը: Արտաքին հարդարանքից նշմարելի են տպավորիչ, երկար տարազով կտիտորների քանդակները և դեկորատիվ սյունները՝ պսակված կիսաշրջան կամարներով, որոնք հին ավանդույթներ ունենալով (Զվարթնոց, Եղվարդ, Թալին), շարունակվեցին նաև հետագայում (Մարմաշեն, Անիի Մայր տաճար):

Տաճարը վերանորոգվել է բազմիցս՝ XI դարից մինչև մեր օրերը, բայց կերպարային փոփոխությունների չի ենթարկվել:

Գավիթ (Ամենափրկչի ժամատուն, Ներքին գավիթ). հրաշազան այս կառույցը արևմուտքից հարում է Ամենափրկիչ եկեղեցուն: Այն ***ի հիմանց,*** Սարգիս ամիրսպասալարի և Քուրդ ամիրայի հովանավորությամբ, Գրիգոր Տուտեորդու աջակցությամբ ՈԼ (1181) թվին կառուցել է վանահայր Հովհաննես Խաչենցին: Շինարարությանն օժանդակել են նաև Կյուրիկե Գ-ի աղջիկներ Մարիամը, Բորինան, Ռուսուդանը և իրենց մայր Թամարի հորաքույր Ռուսուդանը, որոնք հոգացել են երդիկակիր չոր սյուների ծախքերը. ճարտարապետն է ժամհայրը, որի հիշատակագիրը՝ ***շինողի գաւթիս,*** պահպանվում է կամարի վրա:

Եռանավ սրահ (Մեծ գավիթ, Աստվածածնա ժամատուն, Դրսի գավիթ, նախագավիթ, խորան, Մեծ ժամատուն). Այս բազում անվանումները հետևանք են կառույցի կիրառական անորոշության ու հորինվածքային ինքնատիպության՝ որպիսին մնաց հայկական միջնադարյան ճարտարապետության միակ օրինակը:

Այս ընդարձակ շենքը հազիվ թե կարելի է խորան համարել, որը բեմ կամ սեղան չունի և ի սկզբանե չի նախատեսվել իբրև աղոթասրահ: «Իր այս տիպով եզակի օրինակ է հայկական գավիթների մեջ և, ամենայն հավանականությամբ, կապվում է աշխարհիկ պալատական սյունազարդ դահլիճների հետ, որոնց օրինակները մեզ չեն հասել»:[22] Այս կարծիքը չի վիճարկվում: Այս և նախորդ զավթում կատարվել են թաղումներ:

Սրահը հարավից միացած է Ամենափրկչի գավթին, հյուսիսից, կիսով չափ՝ զանգակատանը, արևելքից հարում է Աստվածածին եկեղեցուն (ճեմարանին): Արևմուտքից հոծ պատ չունի, այլ կամարակիր 6 բացվածքներ են՝ հանդիսությունների ընթացքում ելքն ու մուտքը դյուրացնելու և լուսավորությունն ապահովելու համար: Ներքուստ եռանավ է, հաստահեղույս, երկշար 6 սյուներով ու ցածր կամարաթաղերով, բաժանված 9 սեկտորի: Տանիքի ծածկերը ավարտվում են եռաշարք սղոցատամով:

Եզակի ու արտասովոր այս սրահը ՈԿ (1211 թ.) կառուցել է Արագածոտնի իշխան, Մամախաթուն Մամիկոնյանի կողակից, Զաքարե ամիրսպասալարի զորական Վաչեն՝ արձանագրության մեջ կատարածը որակելով ***շինեցի զխորանս:***

Մագիստրոսի ճեմարան. Երկարավուն, նեղլիկ այս սրահը շինված է Աստվածածին և Ամենափրկիչ եկեղեցիների արանքում: Ըստ երևույթին, սրա տեղում եղել է հնագույն մի

---

[22] *Կ. Ղաֆադարյան,* Սանահին. էջ 29:

շենք, այլապես Ամենափրկիչը կկցվեր հին եկեղեցուն: Այն քայքայվել կամ անշուք է եղել, բանվել ու տեղում եկեղեցիների պատերին ութական որմնասյուներ հենելով՝ ծածկել են հարթ տանիքով: Երկու ծայրերը թողնվել են բաց լուսավորության համար, բայց ավելի ուշ արևելյան բացվածքը պատվարել են խաչքարերով: Որմնախարիսխները հարմար են նստելու համար: Ավանդաբար համարվել է լսարան, ուր ճեմելով՝ դասախոսություններ է կարդացել Գրիգոր Մագիստրոսը:

Զանգակատուն. Վանական համալիրներում զանգակատունը իբրև առանձին միավոր հանդես եկել XI դարից (Մարմաշեն): Սանահնի զանգակատունը, ամենայն հավանականությամբ, կառուցվել է XIII դարի վերջում, Աբասի որդի Վագի կողմից: Դա ևս կրկնակը չունեցող, բառսիարկ, աշտարակաձև շինություն է, որը կարող է նաև դիտակետ ծառայել: Առաջին հարկը նկուղային է, երկրորդը՝ եռախորան աղոթարան, երրորդը խաչվող կամարներով ուղղանկյուն սրահ է, որոնց վրա բարձրանում է սյունաշար ռոտոնդան:

Տեղադրված է համալիրի հյուսիսարևմտյան եզրին, մշակված է հատկապես արևմտյան ճակատը՝ մուտքի աղեղնաձև կամարով, լուսամուտներով, երկարաձիգ խաչով:

Գրատուն. Կոչվում է նաև նշխարախուց՝ ձեռագիր մատյանների և մասունքների դարան ծառայելու պատճառով: Համալիրի հյուսիսարևելյան եզրում է: Արտաքինից զուսպ է, ներփակ բառանկյան մեջ, կենտրոնում՝ երդիկով: Ներսի պատերի կենտրոնից առաջ ձգվող մույթերի կամարների վրա նստում է թմբուկը: Որմնախորշերը ծառայել են ձեռագրերի դարակներ: Կամարային համակարգի որոշ տարրեր օգտագործվել են Գոշավանքի գրատանը՝ մեկ դար հետո:

Կառուցել է Դավիթ Անհողինի դուստր Հրանուշ թագուհին ՇԺԲ (1063) թվականին: Ունի նախասրահ:

Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի. Կպած է գրատան նախասրահի հարավարևելյան անկյանը: 1061 թ. կառուցել է Հրանուշ Կյուրիկյանը: Շինարարական արձանագրության մեջ կոչվում է եկեղեցի, առանց անվան, իսկ 1652 թ. վերանորոգման վկայագրում՝ Ս. Գրիգոր:

Եկեղեցին կլոր հատակագծով, ներսից քառաբսիդ կառույց է, որպիսիք հայտնի են VI-VII դդ. (Զվարթնոց, Իրինդ, Գառնի) և վերջնավարտին հասել X-XI դդ. (Խծկոնք, Անի, Մարմաշեն): Ցավոք, համեմատաբար վերասլաց ծավալները կրճատվել են 1612 թ. վերաշինության ընթացքում՝ հատկապես թերատելով արտաքին կամարաշարքերը:

Դամբարաններ. Սանահնում դրանք չորսն են: Առաջինը եղել է Ս. Աստվածածնի արևելյան պատի տակ, ուր թաղվել են Կյուրիկյան թագավորության հիմնադիր Գուրգենը (մահ. 989 թ.) և Դավիթ Անհողինը: Առաջինի արձանագիր տապանաքարը մնում է տեղում: Այդ երկկամար *խորանը* քանդել է Հարություն եպիսկոպոսը 1836 թ. «որոք նիւթքն ի վեր արկաս յայլ պետս»[23]:

Վանքի շրջապարսպի հարավարևելյան եզրում սրբատաշ բազալտով XIX դ. վերջում կառուցված դամբարանը պատկանում է Արղության-Երկայնաբազուկներին, որոնք համարվում են Զաքարյանների ժառանգորդները:

Կարևորը, անշուշտ, Զաքարյանների դամբարանն է, այն պարսպից դուրս է, հարավային կողմում: Դա միաթռիչք սրահ է՝ կցված մի հին գմբեթավոր, կիսավեր վկայարանի: Կառուցվել է Զաքարե և Իվանե եղբայրների կողմից՝ 1189 թ., երկու տարի առաջ

---

[23] *Ս. Զալալեանց.* Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մասն Ա. Տփխիս. 1842. էջ 10:

մահացած իրենց հոր՝ ամիրսպասալար Սարգիս Զաքարյանի գերեզմանի վրա: Գանձակեցու հաղորդմամբ՝ այստեղ թաղված է նաև Զաքարե Զաքարյանը:

Ըստ էության, դամբարան է նաև Գրիգոր Վարդապետ Տուտեորդու հուշարձանը: Ճարտարապետորեն ձևավորված պատվանդանն արևմտյան լանջից ունի նեղլիկ աստիճաններ՝ Օձունի կոթողի նմանակմամբ: Վրան կանգնած է խոշոր պերճաշուք մի խաչքար՝ թիկունքին ընդարձակ արձանագրությամբ: Մոնումենտալ այս կոթողը կերտել է Մխիթարը՝ 1184 թ., թեև Վարդապետը մահացել է ավելի ուշ՝ XII դ. սկզբում, և դին էլ ամփոփվել է խաչքարի առջև:

Զաքարյանների դամբարանից արևելք «էր կաթողիկէիւ շքեղացեալ եկեղեցի յանուն սուրբ Առաքելոյն Յակոբայ Տեառն եղբօր հինգ խորանաւոր, բայց քակեցաւ ձեռամբ Սոդոմոն իշխանի եւ Առաքեալ Արքեպիսկոպոսին ի պէտս շինութեան ներքին կամարաց ամենափրկիչ եկեղեցւոյն»[24]: Այս եկեղեցին, որի պատերի ստորին շարքերն ու բեկորները բացվել են 15 տարի առաջ, քանդվել է XVIII դ. 90-ական թվականներին և կարոտ է լուրջ ուսումնասիրության:

Քանդված եկեղեցուց արևելք կանգուն է *Ս. Հարություն* միանավ սրահը՝ մեկ խորանում երկու պատարագատեղով: Նրա մոտ է Հովհաննես ուսուցչապետի 1227 թ. խաչքարը:

Սանահնի վանքն ունեցել է նաև *Հյուրատուն* (1205 թ.), կացարաններ, որոնք իսպառ ոչնչացվել են:

Վանքից արևմուտք, բարձունքի գագաթին մնում է քանիցս «կարկատված» անշուք *Ս. Սարգիս* մատուռը, իսկ 2կմ արևելք՝ պայտաձև խորանով և կոպտամշակ երեսակալների թեքադիր շարքերով *Ս. Կարապետ* եկեղեցին, որոնք արձանագրություններ չունեն:

Ներկայումս գործում են վանքի աղբյուրները. մեկը համալիրի հյուսիսային պարսպի մեջ (վերափոխված 1831-ին), մյուսը՝ իր տեսակի կառույցներում լավագույններից մեկը, գյուղի հարավարևմտյան եզրի ծորակում, երկլանջ ծածկի տակ առնված, որը երկկամար բացվածքով հրաշալի շինություն է (1255 թ.):

Իսկ Սանահնի կամուրջը ներկայումս գրանցված է Ալավերդի քաղաքի տարածքում:

---

[24] Նույն տեղում, էջ 14: